ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

31.03.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ 266-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 52/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշման 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով Գորիս քաղաքի բնակիչ Սուրեն Սարգսյանի 2023 թվականի մարտի 21-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սուրեն Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Անկախության փողոցի թիվ 52/2 հասցեի, 09-003-0051-0044 կադաստրային ծածկագրով, 0.0092հա մակերեսով հողամասի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման նշանակության, և այդ հողամասի վրա առկա 09-003-0051-0044-001 կադաստրային ծածկագրով 221,8քմ մակերեսով բնակելի տան գործառնական նշանակությունը փոխել հասարակական գործառնական նշանակության՝ որպես առևտրի տաղավար:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2023/31/03
Ք.Գորիս